

Մշակութային և Հասարակական
Երկարաթարթեր
Յոյն
1200 թուման
Հայաստանում 320 դրամ

ՎԵՐԵ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ԴԷՄ

ԲԱՆՈՒՄՈՒՆ



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Թեհրանի Հայոց թեմական խորհրդի համագործակցության հրավեր**
- 3 **Լիբանանում Իրանի դեսպանի հանդիպումը Արամ Ա. վեհափառի հետ**
- 3 **ՌՎՎեր են իսկական մեղաւորները Կոլիա Տեր Յովհաննիսեան**
- 4 **Յոյսի 100-րդ համարի հրատարակման առիթով Կոլիա Տեր Յովհաննիսեան**
- 5 **Յոյսի 100-րդ համարի հրատարակման առիթով Խաչիկ Խաչեր**
- 6 **Իշխանությունների երկխոսությունը ընդդիմության հետ Նայիրա Չայրումեան**
- 16 **Աջխարիզ մանուկների աչքերով Արմինե Մելիք-Իսրայելեան**
- 18 **Համակարգիչ թե՛ նոտբուկ**
- 19 **Արեւի ակնոցներ՝ օգտակար խորհուրդներ**
- 20 **Աբդուլահ Զիայիի գիր-նկարչությունները**
- 22 **Աւարտուեց 30-րդ գաւաթի մրցութիւնները Արման Տ. Ստեփանեա**

Մշակութային և Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե սարի, քիւ101, Յունիս 29, 2011,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ



- 8 **Մանուկների դեմ բռնություն՝ Դաստիարակչական ապտակից մինեւ խոշտանգում**
- 8 **Աջխարիում 275 մանուկներ ենթարկում են բռնության**
- 11 **Մեզ էլ է վերաբերում Ռ.Ս.**
- 12 **Երեխան և սեռական բռնությունը**
- 13 **Երեխաների դեմ բռնությունը՝ թւերով**

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Հայերեն բաժնում	5	Մարտի մեկի գործի քննարկում Նայիրա Չայրումեան		հոտարածներից մինչեւ բազմացեղ քաղաք
4	Սերժ Սարգսեան՝ մենք միշտ պատրաստ ենք եղել բանակցելու Աստղիկ Բեդեւեան	6	Կազանի եռակողմ բանակցությունները Դարաբաղի մասին	12	Պայման պարբերականի երկու նոր համարները
		8	Գլենդել՝ Վերդուզոյի	13	Բաքւի հայերը

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատեր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինե Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարվեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերեն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քարին Եաղուբի</p>	<p>Հասցե՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
---	---	--	---

Հայելի կայքում հանդիպեցինք, Յունիսի 11-ին տեղադրած, Թեհրանի Հայոց թեմի ազգային առաջնորդարանի դիւանի ստորագրութեամբ, հետեւեալ համագործակցութեան հրաւերին: Չգիտենք, ինչո՞ւ այս յայտարարութիւնը առաջնորդարանը չի տրամդրել նաեւ «Յոյս»-ին եւ իրանահայ մամուլի այլ թերթերին... Ճիշտն ասած, այդպիսի խտրական վերաբերմունք այլեւս չի զարմացնում մեզ: Դա կատարուում է այնպիսի բնական ձեւով, եւ այնքան պարզ ձեւով է անտեսուում որեւէ ոչ իւրային մարմին, միութիւն, թերթ, որ այլեւս անիմաստ է բողոքելը: Արդէն անցել է այս կոչի ժամկէտը, այն հրատարակուում ենք, միայն առ ի տեղեկութիւն մեր ընթերցողներին, յատկապէս համայնքում աշխատող տարբեր մարմինների եւ նրանց պարտականութիւնների մասին դրանում ընդգրկուած տեղեկութիւնների համար:

Թ. Հ. Թ. Թեմական խորհուրդ Համագործակցութեան հրաւեր

Այսու յարգոյ հայ համայնքին տեղեկացնում ենք, որ Թեմական խորհրդի նոր կազմի ընտրութեամբ՝ վերանորոգելու են նաեւ Թեմական խորհրդին ենթակայ բոլոր մարմինների անձնակազմերը:

Առ այդ՝ այն բոլոր հայրենակիցներին, որոնք ցանկութիւն ունեն անդամակցել ստորեւ նշուած մարմիններից որեւէ մէկի կազմին, հրաւիրում ենք բարի լինել՝ իրենց նախասիրութիւնները, կարողութիւնները եւ անձնական այլ տւեալները համառօտ կերպով ներկայացնելու ազգային առաջնորդարանի գրասենեակ՝ ըստ կցուած հարցարանի՝ մինչև ս. թ. Յունիսի 20-ը, որպէսզի օր առաջ ընթացք տրւի իրենց դիմումին:

Առ ի տեղեկութիւն՝ ներկայացնում ենք իւրաքանչիւր մարմնի միջոցով տարւող աշխատանքները.

Կրթական խորհուրդ - Պատասխանատու է հայոց ազգային դպրոցների ներքին կեանքի, ուսումնադաստիարակչական հարցերի, ուսուցիչների, դասագրքերի, հայերէնի դասաւանդման, աշակերտների յառաջադիմութեան, նիւթականի ապահովման եւ այլ հարցերի համար:

Կտակա -կալւածային մարմին - Հետեւում է ազգապատկան կալւածների արխիւների պահպանմանը, իրաւական հարցերին, կալւածների վաճառման, վարձակալման եւ այլ ձեւերով օգտագործման խընդիրներին:

Ծխական տուրքի մարմին - Նշանակում է ծխական տուրքի համապատասխան գումար՝ զանձելու համար համայնքի բոլոր եկամուտ ունեցող ազգայիններից:

Իւրաքանչիւր քաղաքամասում անհրաժեշտ է առանձին ենթայանձնախումբ:

Գերեզմանատների վարչութիւն - Հետեւում է գերեզմանատների՝ Դուլաբ և Նոր Բուրաստան, ներքին վարչական հարցերին, գերեզմանատներում աշխատող անձանց՝ քարտաշ, գերեզմանափոր, ծաղկա-

վաճառ, պահակներ եւ այլնի աշխատանքին, ներքին մաքրութեան եւ կարգաւորման:

Եկեղեցական խորհուրդներ - Թեհրանի իւրաքանչիւր հայոց եկեղեցի ունի իր առանձին խորհուրդը, որը սովորաբար կազմուած է լինում պատկան քաղաքամասի ազգայիններից: Խորհուրդը հետեւում է եկեղեցու լուսաւորութեանը, պահպանմանը, արարողութիւնների անխափան կատարմանը, երգչախումբին, պաշտօնեաներին եւ այլն:

Դատական խորհուրդ - Հանդիպումներ է ունենում ընտանեկան դժարութիւններ ունեցող անուսիներին հետ եւ խորհրդատութեամբ օժանդակում է նրանց դժարութիւնները վերացնելու գործին, նաեւ տնօրինում է ապահարգանի եւ ընտանեկան այլ հարցերին առնչուող դիմումները:

Շինարարական մարմին - Հետեւում է ազգապատկան բոլոր կառոյցներում՝ դպրոցներ, եկեղեցիներ, բուժարան եւ այլն, անհրաժեշտ նկատուած նորոգութիւններ եւ այլ աշխատանքներ կատարելու գործին՝ նրանց կողմից ստացուած դիմումի հիման վրայ:

Կարիքաւորներին օժանդակող մարմին - Ընթացք է տալիս իրեն դիմող կարիքաւոր ընտանիքներին՝ իր բիւջէից ամսական վճարումներ կատարելով, ինչպէս նաեւ նրանց օգնելով՝ բնակարան վարձելու կամ բնակարանի կանխավճար տալու համար:

Ուսանողական ֆոնդեր - Մարմինն ընդունում է դիմումներ՝ ֆոնդից օգտուել ցանկացող ուսանողներից եւ ֆոնդի կանոնադրութեան համապատասխան՝ ընթացք է տալիս այդ դիմումներին եւ տարեկան յատկացումներ կատարում:

Գրական ֆոնդ - Ֆոնդը իր դրամազլխի սահմաններում, շրջանի ընթացքում ընտրում է արժեքաւոր համարուող գրքեր եւ հետեւում է դրանց հրատարակման հետ առնչուող բոլոր գործերին:

«Ա. Աւետիսեան» բուժարանի խնամակալ մարմին - Մարմինը հսկում եւ տնօրինում է բուժարանի ներ-

քին եւ արտաքին, նիւթական, վարչական եւ այլ կարգի բոլոր հարցերը եւ հետևում սոյն հաստատութեան ամբողջական գործունէութեանը:

Յարաբերական մարմին - Իր հաղորդագրութիւններով, տեղեկութեամբ ու բացատրութիւններով կապ է պահում հայ համայնքի, ինչպէս նաեւ պետական շրջանակների եւ պարսկական կազմակերպութիւնների կամ պարսիկ անհատ հայրենակիցների հետ՝ ընթացք տալով նաեւ նրանց կողմից եղած դիմումներին եւ հարցումներին:

ԴԻՒԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՂՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԱՐԱՄ Ա. ՎԵՆԱՓԱՌԻ ԵՒ ԻԻՀ ԼԻԲԱՆՆՈՒՄ ԴԵՄՊԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառը բարձր է գնահատել Իրանի որդեգրած պարզ ու թափանցիկ արտաքին քաղաքականութիւնը:

Լիբանանում ԻԻՀ դեսպան՝ Ղազանֆար Ռոքնաբաղին, ուրբաթ օրը, Յունիսի 17-ին, Բեյրութում տեսակցել է Մեծ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառի հետ եւ բանակցել է Լիբանանի իրադարձութիւնների, նաեւ տարածաշրջանային ու միջազգային հարցերի շուրջ:

Հանդիպման ընթացքում կողմերը բարձր գնահատելով, յատկապէս Իսլամական յեղափոխութեան յաղթանակից յետոյ, Իրանի հետ հայերի պատմական ու մշակութային խորը կապերը եւ Իրանահայութեան նկատմամբ ԻԻՀ յարգանքը, կարեւորել են այս յարաբերութիւնների զարգացման անհրաժեշտութիւնը:

Լիբանանում ԻԻՀ դեսպանը Արամ Ա.-ի հետ հանդիպման ընթացքում ասել է. «Իրանը ամուր ու մշտական յարաբերութիւններ ունի հայ կրօնական դէմքերի հետ, ինչը մեզ պարծենալու առիթ է տալիս»:

Ռոքնաբաղին պարզաբանելով տարածաշրջանի վերջին իրադարձութիւնները, Լիբանանում նոր կառավարութիւն կազմելու մասին գոհունակութիւն յայտնելով, ասել է .-

« Յուսով ենք Լիբանանի ժողովուրդը իր միասնութեան ու միաբանութեան շնորհիւ կը կարողանայ կենտրոնանալ համատեղ թշնամու՝ Իսրայէլին դիմագրաւելու ճակատում :

Աղբիւր՝ հայկական ռադիօժամի կայք

Ո՛վքեր են իսկական մեղաւորները ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹԵԱՆ ԱՃԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԻԱՆԵՐԸ

Կոլիա Տէր Յովհաննիսեան

Վերջերս «Շանթ» հեռուստաընկերութեան Հորիզոն հաղորդման մէջ ասեց, որ Հայաստանում վերջին մէկ տարւայ ընթացքում երկու անգամով աճել է սեռական բռնութիւնների տոկոսը երեխաների ու կանանց նկատմամբ: Հաղորդմանը կցւած տեսանիւթի մէջ, փողոցում հարցուփորձուող անցորդները տարբեր տեսակէտներ էին արտայայտում այս պախարակելի երեւոյթի մասին: Արտայայտած տարբեր կարծիքները մէկ ընդհանրութիւն ունէին. կենցաղային դժուար պայմանների ու զրկանքների հետեւանքով սրւում են մարդու բնազդային ու գազանային հակումները: Ոչ ոք չխօսեց (զուցէ մշեց, բայց չսփռեց) հէնց նոյն կամ այլ հեռուստակայաններից ցուցադրուող հայկական սերիալների հնարաւոր վատ ազդեցութեան մասին: Այստեղ, օրը ցերեկով, շատ հանգիստ աղջիկ են առեւանգում, մարդկանց պատանդ վերցնում, կանանց բռնաբարում, ծեծում են երեխաներին, իրար «լխկում» կամ «գիւլլում» են ու մնում՝ անպատիժ, իսկ եթէ պատժւում են, ապա սերիալի վերջին սերիաներում, այսինքն միջին հաշուով մէկ կամ երկու տարի յետոյ (խօսքը, յանուն շահի երկարող ու ձգձգող սերիալի տեւողութեան մասին է), որի ընթացքում ոչ միայն մոռացւում են մէկի կատարած առաջին յանցագործութիւնները, այլեւ անպատիժ մնացած բացասական կերպարը հասցնում է գործել նոր մեղքեր:

Եթէ Հայաստանի կեանքին անծանօթ մէկին բախտ վիճակի դիտել հայկական սերիալները, հետաքրքիր է, ի՞նչպիսին կը լինի նրա տպաւորութիւնը աշխարհում առաջինը քրիստոնեայ դարձած եւ դարաւոր մշակոյթ ունեցող այս երկրի մասին:

Դատելով սերիալներից, թւում է, թէ Հայաստանում մարդ չկայ, որ տանը գէնք չունենայ, որեւէ կերպ չառնչի յանցագործ կլաններից մէկին, վթարի, ծեծելու եւ արտառոց հիւանդութիւնների պատճառով հիւանդանոց ընկած չլինի եւ այլն, եւ այլն (բոլոր հիւանդանոց ընկածների վիճակն էլ սկզբում անյոյս է, բայց յետոյ «հրաշքով» ոտքի են կանգնում, կամ երբեմն մեռնում, նայած դերասանի ու տւեալ հեռուստաընկերութեան մէջ կնքւած պայմանագրի): Յանցանքից յետոյ, առաջին հերթին, ոստիկանութիւնը չեզոքացւում է յանցագործների կողմից, օրինակ՝ զոհի հօրը բջջայինով յղւած սպառնալիքով, որն, ի դէպ, հնչում է լկտի, փողոցային ոճով, ծուլած բերանով կամ կարմրած աչքերի վայրենի արտայայտութեամբ.

-Դէ, հիմա ուշադիր լսի՝ ինչ են ասում, եթէ ձէն ես համում կամ դիմում միլիցեքին, էրեխուդ սֆաթը էլ չես տննում...

Որքան էլ անհամզօղիչ ու թոյլ են մատուցած կադրերը, անհերքելի է դրանց բացասական ազդեցությունը մատաղ սերնդի վրայ: Ծիշտ է, ոմանք պնդում են, որ սերիալները ընդհանրապես այնքան էլ հեռու չեն իրական լինելուց, բայց որքանով է անհրաժեշտ տւեալ անբարոյ տեսարանների ցուցադրումը, յատկապէս, եթէ հաշի առնենք այն հանգամանքը, որ ֆիլմերում գոյները, այսպէս թէ այնպէս, խտացւած են: Առանց այն էլ, Հայաստանում բաւականին «պարարտ» է կանանց՝ սեռական բռնութեան ենթարկելու ենթահողը, որին նպաստում է տղամարդկանց կողմից կանանց երկրորդական համարելու հոգեբանութիւնը, «լաւ տղերքով» հաւաքւած խմիչքի, յատկապէս օղու չարաշահումը, սեւ ապակիներով մեքենաները (մեծ մասամբ ջիպեր), որոնց մէջ ինչ էլ արւի, դրսից ոչ ոք ոչինչ չի նկատի, փողոցներում բաց հագնւած, մարմնի բարենմասնութիւնները զրգռիչ կերպով ցուցադրող «որսերը», եւ որ կարելորն է, յանցագործների ուղեղներում բոյն դրած այն ճղճիմ գիտակցութիւնը, որ մղւած ամօթից կամ իր ապագան խորտակւած չտեսնելու մտահոգութիւնից, ինչպէս նաեւ արդարադատութեան օրգանների հանդէպ ունեցած անվստահութիւնից՝ ոչ մի կին, բռնաբարւելուց յետոյ, չի դիմելու ոստիկանութեանը, մէկ է, հարուստ կամ բարձր կոչում ունեցող հայրը կամ եղբայրը կը բացի քսակը, եւ ամէն բան կաւարտւի առանց պատժի:

Իսկ հայկական սերիալները ասես իւղ են լցնում կրակի վրայ՝ բորբոքելով կրքերն ու վատ հակումները: Վերցնենք օրինակ «Արմենիա» հեռուստաընկերութեամբ ցուցադրող «Ո՞ւր է իմ տղամարդը» սերիալը, որի մէջ Էդիթայի հայրը խոստովանում է Վահագն անունով իրաւաբանին՝ իր աղջկան առեւանգողներին մի քանի հազար դոլար «չնչին» գումար վճարելու եւ պետական օրգաններին չբողոքելու իր ընդունած որոշման մասին: Կամ ասենք Հ1-ի «Ամնա» սերիալում. դիսկոտեկից դուրս գալիս՝ երկու երիտասարդ առեւանգում ու բռնաբարում են Արեւիկին: Ծիշտ է, յանցագործները հէնց նոյն գիշեր մահանում են վթարի հետեւանքով (երեւի Աստուած է պատժում...), բայց եթէ այդ վթարը տեղի չունենար, Արեւիկի հայրը՝ պարոն Գնունին կամ եղբայրը՝ Նարեկը երբէք չէին դիմի ոստիկանութեանը: Դէպքի յաջորդ օրը նրանք նոյնիսկ տխրում եւ ափսոսում են, որ չկան յանցագործները, որպէսզի իրենց ձեռքով հաշիւարդար տեսնեն ու «գրողի ծոցը» ուղարկեն նրանց... Դրական հերոսի այս ցանկութիւնը, արդէօք, օրէնքը շրջանցելու կամ արհամարհելու արտայայտութիւն չէ: Սէկն ասի՝ այս բոլորից ի՞նչ պիտի սովորի նոր կեանք մտած պատանին:

Հարց է առաջանում, երբ քաղաքական ոլորտում մասամբ կասեցւում է խօսքի ազատութիւնը, փակւում

են ընդդիմախօս ՁԼՄ-ներ, ինչո՞ւ պետութիւնը, ի դէմս Մշակոյթի Նախարարութեան, չի վերահսկում կամ կասեցնում սնկի պէս շատացող, եթէ ոչ բոլոր, ապա հակադաստիարակչական ու անբովանդակալից սերիալների թողարկումը:

Այսպէս գնայ՝ երեխաների եւ կանանց նկատմամբ սեռական բռնութիւնների տոկոսը իջնելու փոխարէն, արդէօք, չի՞ արձանագրւի աւելի բարձր աճ:

Իսկ հասարակական այս տխուր փաստի մատմանը՝ շումը «Շանթ»-ի կողմից, իրօք, սրտացաւութիւն է, թէ՛ սերիալների վատ ազդեցութիւնը քօղարկելու անյաջող ճիգ:

Ողջոյնի խօսք

«ՅՈՅԱ»-Ի 100-ՐԴ ՀԱՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱՎԱՄԸ ԱՌԻՔՈՎ

Սրտանց ողջունում են «Յոյս»-ի 100-րդ համարի հրատարակութիւնը:

Անկանխակալ եւ որեւէ քաղաքական խմբաւորման չյարող այս երկչաբաթաթերթը անցնող մի քանի տարւայ մէջ, իր անւանը համապատասխան, նոր յոյսերով լցրեց պարբերական մամուլով հետաքրքրող իրանահայ համայնքի ազատաստի հեղինակների եւ ընթերցողների սրտերը: Դիմագրաւելով շատ դժարութիւններ՝ «Յոյս»-ը գոյատեւեց ու յարատեւեց, չվարանց քննադատել ու չսոսկաց քննադատւելուց, խիզախեց մատմանշել մեր հնամենի գաղութի, Սփիւռքի եւ Մայր Հայրենիքի առօրեայ կեանքում առկայ տխուր երեւոթներն ու խոցելի կէտերը, դուատեց հայ ժողովրդի նվաճումներն ու յաջողութիւնները ողջ աշխարհում:

Հակառակ անանդական ուղղագրութեամբ հրատարակւելու փաստին՝ քիչ չէր նաեւ «Յոյս»-ի յաջողութիւնը Հայաստանում: Թէեւ դժարութեամբ, բայց շատերն են այնտեղ ընթերցում «Յոյս»ը՝ գնահատելով նրա անաչառութիւնը, ինչպէս նաեւ հրատարակչական բարձր որակը:

Դուատելի է նաեւ վերջերս մեկնարկած «Յոյս»-ի պարսկերէն բաժինը, որը մի փոքրիկ ցուցափեղ է՝ պարսիկ հասարակութեանը ներկայացնելու հայութեան ականաւոր դէմքերին եւ ուշագրաւ դէպքերին:

Կանաչ ճանապարհ են մաղթում «Յոյս»-ը լոյս ընծայող եւ յոյսի շողը մեր սրտերում վառ պահող աշխատակազմի բոլոր անդամներին:

Կ. Տէր Յովհաննիսեան

12.06.2011

Թեհրան

ՈՂՋԵՐԹԻ ԽՕՍՔ

«ՅՈՅՍ»-Ի 100-ՐԴ ՀԱՍԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Խաչիկ Խաչեր

Անչափ ուրախ եմ, որ «Յոյս» -ը յաջողութեամբ բոլորեց իր հրատարակման չորրորդ տարին ու անցաւ իր 100-րդ համարից:

Ամենից առաջ եկէք բարձրացնենք մեր բաժակները եւ խմենք՝ թէ «Յոյս» -ի եւ թէ, բոլոր այն մարդկանց կենացը, որոնք ստեղծեցին ու հրատարակում են այս երկշաբաթաթերթը:

Եկէք այս կենացով ցանկանանք, որ «Յոյս» -ը բոլորի ոչ միայն չորս անգամ, այլ հարիւր չորս անգամ, չորս տարին եւ իրանահայութիւնը տօնի և շնորհաւորի նրա 1000 -րդ ու (չար աչքից հեռու) նաև 10 000-րդ համարի ծնունդը:

Ամենից առաջ պէտք է շեշտել «Յոյս» -ի որեւէ կուսակցութեան չպատկանելու երեւոյթը: Ուրեմն, որքան ես եմ տեսնել կարողանում, «Յոյս» -ը որեւէ տեղից «զիծ» ու «հրահանգ» չի ստանում: Սա իհարկէ կարեւոր է, մեր համայնքի «Միակնանի» դեկավարութեան համար, որ համայնքային բոլոր ակնոցները, խոսափողերն ու բարձրախօսները յիսուն-վաթսուն տարի է ինչ նոյն մի քանի անձանց ձեռքերի մէջ են սեղմած պահուում եւ նոյն «միակ» աչքով է ամեն ինչ դիտուում¹:

Իհարկէ, այս խնդիրը շատ լաւ նկատելի է, «Յոյս» -ի հարցազրոյց կատարողների փորձառութեան պակասի մէջ, հարցազրոյցներ, որոնք կատարուում են, ժամանակ առ ժամանակ այս 50-60 տարիների բովում մագերը ճերմակեցրած այսպէս կոչւած Ազգային Վարիչների հետ, որոնք ամենայն ճարպկութեամբ վերջի վերջոյ հարցազրոյցն աւարտում են իրենց «յաւերժ» յաղթական ճա-

ռով:

Ես պիտի ասեի, որ «Յոյս» -ի համարների մէջ շատ անգամ որակի բաւական տարբերութիւններ կան: Համարներ կան, որ բազմազան միութեամբ են օժտուած եւ կարդալիս խմբագրման շատ պակաս չես գգում: Համարներ էլ կան, որոնք շատ թոյլ են, եւ վարպետ խմբագրի ձեռքի չգոյութիւնը, խստօրէն զգացում է հենց առաջին էջերից²:

Հասանք մեկ այլ կարեւոր բուն միւթի՝ իրանահայութեան հրատարակութիւնները մեր գաղութի Հայոց Լեզվին տիրապետելու մակարդակն են արտացոլում: Ուրեմն չի կարելի ամէն մի գրածք ու արտայայտութիւն տպագրել: Մի քանի ժամանակ առաջ, մեր թերթերից մէկում, Ա երկրի դեսպանը Բ երկրի արտգործ նախարարութեան կողմից բերման էր ենթարկւել: Բերման ենթարկել նշանակում է ոստիկաններին ուղարկել կասկածելի մի անձի ոստիկանատուն բերելու: Այս բացատրութիւնից յետոյ, արդեօ՞ք կարելի է մի երկրի դեսպանի բերման ենթարկել³:

Այնուամենայնիւ -շատ զգուշօրէն- խորհուրդ եմ տալիս, վերանայել «Յոյս» -ի խմբագրական կազմի անունները եւ աշխատել ցորենը ջոկել որոմից: Ի՞նչ խըմբագրական կոլեգիա, երբ մարդը տարեկան մէկ կամ երկու թարգմանութիւն է փորձել մատուցել թերթին: Յետոյ էլ ի՞նչ ենք շահում դրանից, երբ հայաստանցու անուններ ենք աւելացնում մեր ցանկին:

Բարեկամներ, գտէք, մի կուռ հայերէնով օժտուած, սրտցաւ անձնաւորութիւն, որ վերջում

կարդայ ամէն ինչ ու իր ամբողջական շտկումներն անի, յետոյ հրատարակէք:

Շնորհաւորելի եւ ողջունելի է նաեւ պարսկերէնով կատարած հրատարակութիւնը: Մեծ քայլ է «Յոյս» -ի երկլեզւանի տպագրութիւնը պարսիկ եւ հայ ժողովուրդների բարեկամութեան խորացման ուղղութեամբ:

Կառաջարկէի աւելացնել մի սիւնեակ, երկու շաբաթը մէկ, հայութեանն ու Հայաստանին վերաբերող կարեւոր լուրերը ի մի բերելու, եւ մի ջոկ հատորով հրատարակել անցեալ չորս տարիների ընթացքում «Յոյս» -ի էջերում տպագրւած պատմածքներն ու բանաստեղծութիւնները՝ «Գրական Յոյս» անունով:

Ձեզ բարի ծամբայ եւ երկնքի անհունի չափ համբերութիւն սիրելի «Յոյս» -ականներ...

1 Թերթը վերջին մի քանի տարիների Ազգային Իշխանութիւնների, Արարատի, Հայոց Ակումբի, Սիփանի եւ... դեկավարութեան ցանկերը եւ կը տեսնէք, թէ որքան էք հանդիպելու նոյն անուններին: Չէ որ մեր համայնքում ուրիշ մարդիկ չկան:

2 Օրինակ թիւ 99-ն իր գրական, թարգմանական ու նաեւ ինքնուրոյն գործերով:

3 Իհարկէ, շեշտում եմ, սա «Յոյս» -ի մէջ չի տպագրւել:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԳԻՄՈՒԹԵԱՆ ՆԵՏ

Նայիրա Հայրունեան

Հայ ազգային կոնգրեսի հետ երկխոսութեանը վերաբերող հարցերը մեկնաբանելով՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը, Յունիսի 17-ին, յայտարարութիւն է արել, որը ընդդիմութիւնն անորոշ է համարել, իշխանութիւնը՝ միանգամայն կոնկրետ:

Ըստ էութեան, Սերժ Սարգսեանը չի հրաժարել Կոնգրեսի հետ երկխոսութիւն սկսելուց, աւելին՝ յայտարարել է, որ երկխոսութիւնը նախաձեռնել է իշխանութիւնը: Այժմ նրանք պատրաստ են քննարկել բոլոր խնդիրները. ընտրութիւնների հարցերով Կոնգրեսը կարող է դիմել խորհրդարանի խօսնակին, տնտեսական հարցերով՝ վարչապետին, երկրի բարեփոխման հարցերի աւելի լայն շրջանակը կարելի է քննարկել կուլիցիոն կուսակցութիւնների հետ, իսկ եթէ հարկաւոր է նախագահի միջամտութիւնը՝ ապա նախագահի աշխատակազմի ղեկավարին: Հայ ազգային կոնգրեսը ձեռնպահ է մնացել անմիջական պատասխանից եւ խոստացել է իր դիրքորոշումն աւելի ուշ յայտնել: Սակայն գլխաւոր հարցը, որը փորձագետները բազմիցս բարձրացնում եւ քննարկում են՝ ի՞նչի հետ է կապած երկխոսութիւնը, դեռ պատասխան չի ստացել: «Առաւօտ» թերթը ենթադրութիւն է արել, որ դա կապած է դարաբաղեան կարգաւորման ակտիւացման հետ. «Կոնգրեսի քննադատներից ոմանք ասում են, որ ընդդիմութեան նպատակներից մէկն այն է, որ նախագահ Սարգսեանը ներքին ճակատում դուրս գայ խոցելի վիճակից եւ դարաբաղեան բա-



նակցութիւններին գնայ «Լաւ խաղաքարտերով»: Կարծիք կայ նաեւ, որ առաջին եւ երրորդ նախագահներ Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ Սերժ Սարգսեանը երկխոսութեամբ իւրօրինակ կուլիցիա են կազմում ընդդէմ երկրորդ նախագահ Ռեբրոս Քոչարեանի: Քոչարեանը, որը «քաղաքական արձակուրդում է», բազ-

միցս դէմ է արտայայտել Սերժ Սարգսեանի վարած քաղաքականութեանը: Շատերը դա գնահատել են որպէս մեծ քաղաքականութիւն վերադառնալու Քոչարեանի փորձեր: ՀՀ նախկին արտգործնախարար, այժմ «Սիւիլիթաս» հիմնադրամի խորհրդի նախագահ Վարդան Օսկանեանը բանաւոր հաստատել է այդ տար-

ԿԱԶՄՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՆՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՁ

բերակը: «Ազատութիւն» ռադիոկայանին տւած հարցազրոյցում նա յայտարարել է, որ «Այսօր մենք ծանր վիճակում ենք, որովհետեւ վատ է կառավարուում երկիրը, մենք ծանր վիճակում ենք, որովհետեւ սխալ քաղաքականութիւն է վարուում, որովհետեւ դեռևս չենք կարողանում արմատական, հիմնարար փոփոխութիւններ կատարել մեր երկրում, որովհետեւ ժողովրդավար պետութիւն չենք, որովհետեւ կայ քաղաքական մոնոպոլիա»: Նա նշել է, որ երկխոսութեան լաւագոյն արդիւնքը կարող էր լինել քաղաքական մենաշնորհի վերացումը: «Այսօր դրա (քաղաքական մենաշնորհի վերանալու) բոլոր օբյեկտիւ նախադրեալները կան, որովհետև ծանր է երկրի վիճակը, մեր ժողովուրդը չի գնայ այսօր իշխող կուսակցութեանն իր ձայնը տայ, այսօր քաղաքական ուժերը աւելի հասուն են, աւելի բազմազան են: Եթէ կիսատ չափով այսօր Հայաստանում ազատ, արդար ընտրութիւններ լինեն խորհրդարանական, ամբողջ քաղաքական դաշտը կը ձեւափոխուի, աւելի նորմալ կը լինի, կստեղծւեն իսկական կոալիցիաներ», - համոզմունք յայտնեց նախկին արտգործնախարարը: «Եթէ այս բոլորն արուում է վերջ ի վերջոյ այդ արդիւնքին հասնելու, յատկապէս՝ ՀԱԿ-ի (ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի) կողմից, ես դա ողջունում եմ, իսկ եթէ այդ բոլորը այսօր արուում է՝ երկուստեք մտածելով, որ ինչ-որ այլ խնդիրներ են ուզում լուծել, որ վերջ ի վերջոյ վերապահպանի այս քաղաքական մենաշնորհը, եւ ուղղակի ՀԱԿ-ը որոշ տեղեր ունենայ՝ ես դատապարտում եմ»: Նա ընդգծել է, որ Քոչարեանի նախագահութեան օրոք երկիրը բարգաւաճել է: Եւ նոյնիսկ Տէր-Պետրոսեանի ժամանակաշրջանի հետ համեմատած այսօրւայ շրջանն աւելի վատն է. «Չգիտեմ, Քոչարեանը ինքը պէտք է որոշի՝ կուզենա՞ր վերադառնալ, թէ՞ չէ, եթէ ուզում է՝ ինչ ճանապարհով, դա այլ խնդիր է», - ասաց նա:

Աղբիւր՝ www.armenianow.com



Ուրբաթ, Յունիսի 24-ի երեկոյան, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման վերաբերեալ Հայաստանի Հանրապետութեան, Ռուսաստանի Դաշնութեան եւ Ադրբեջանական Հանրապետութեան նախագահների համատեղ յայտարարութիւնից պարզ է դառնում, որ աւելի քան երկու տասնամեակ շարունակող Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծմանն առնչող Հիմնական սկզբունքների շուրջ կողմերը համաձայնութեան չեն եկել: Սակայն, Ռուսաստանի Կազան քաղաքում տեղի ունեցած բանակցութիւններում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանն ու Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիեւը խնդրի կարգաւորման ուղղութեամբ առաջընթաց են արձանագրել:

Սարգսեան-Ալիեւ հանդիպումը տեղի է ունեցել Ռուսաստանի կազմում գտնուող Թաթարստանի մայրաքաղաքում՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդւեդեւի նախաձեռնութեամբ, որն ամերիկացի եւ ֆրանսիացի իր պաշտօնակիցների հետ գրեթէ մեկ ամիս առաջ յորդորել էր կողմերին քաղաքական կամք դրսեւորել եւ աւարտին հասցնել Հիմնարար սկզբունքների վրայ աշխատանքները:

Մադրիդեան սկզբունքները ենթադրում են հայկական զօրքերի դուրս բերում Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքներից, որոնք գտնուում են հայկական ուժերի վերահսկողութեան ներքոյ, խաղաղապահ ուժերի մտցումը, փախստականների վերադարձ եւ Ղարաբաղի համար միջանկեալ կարգավիճակ, որին կը յաջորդի «պարտադիր իրաւական ուժ ունեցող» կամքի արտայայտումը: Հայաստանը պընդում է, որ սկզբունքներում նախատեսւի նաեւ Ղարաբաղի *դէ իւրէ* անկախութեան հնարաւորութիւնը Բաքուից, իսկ Ադրբեջանն էլ չի ցանկանում, որ Ղարաբաղը «ինքնավարութեան բարձր աստիճանից» զատ այլ կարգավիճակ ունենայ: Ակնկալւում էր, որ բանակցութիւններից յետոյ, Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահները միասին կը ճաշեն: Հաղորդում է նաեւ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները պէտք է շաբաթ օրը Կազանում հանդիպեն Մինսկի խմբի համանախագահներին:

Աղբիւր՝ www.armenianow.com

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԴԷՍ ԲՈՆՈՒԹԻՒՆ

Վերջերս իրանական մամուլում, մէկը միւսի ետեւից բացայայտւած երեխաների խոշտանգման ու տանջման ենթարկելու դէպքերը, հանրութեան ուշադրութիւնը սեւեռել են մանուկների հանդէպ կիրառուող բռնութեան հասարակական ցաւալի երեւոյթի վրայ: Երեխայ են բերում հիւանդանոց, բուժքոյրերն ու բժիշկները երեխայի մարմնի վրայ նկատում են բազմաթիւ վէրքերի, հարւածների եւ այրւածքների հետքեր: Երեւոյթը կասկածելի գտնելով, նրանք դիմում են ոստիկանութեան եւ «Բեհզիստի»-ին: Խնդիրը հետեւելով՝ պարզուում է, որ երեխայի ծնողները նրան տանջել են եւ մարմնական վնասւածքներ հասցրել: Սրանք, մանուկների դէմ գործ դրուող բռնութեան ծայրայեղ դէպքեր են, երբ հասարակութիւնը ներկայացնող իշխանութիւնները իրաւասու են միջամտել, դատարան տանել ծնողներին եւ երեխային առնել իրենց հսկողութեան տակ: Սակայն, միշտ էլ այսքան պարզ չեն դէպքերը: Արդեօ՞ք, որեւէ մարմնական պատժամիջոց, ասենք երբ ծնողը խփում է երեխայի ձեռքին կամ ուսուցիչը ապտակում է աշակերտին, կարելի է՞ մանուկների դէմ բռնութիւն համարել եւ դասել նոյն կարգում, ինչպէս վերը նշւած սարսափելի դէպքերը: Սրանք կարող են դաստիարակչական սխալ ձեւեր եւ մեթոդներ լինել, բայց հաւանաբար ոչ բռնութիւն մանուկների դէմ: Բայց, ո՞րն է սահամանը, ի՞նչ չափանիշով կարելի է սրանք բաժանել միմեանցից:

Ստորեւ, նախ ներկայացնում ենք խնդրի ընդհանուր պատկերը, եւ ապա ներկայացնում վերը նշւած հարցերին տրւած որոշ պատասխաններ:

ԱՆԽԱՐՀՈՒՄ 275 ՄԻԼԻՈՆ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՆԹԱՐԿՒՈՒՄ ԵՆ ԲՈՆՈՒԹԵԱՆ


1993 թի Մարտ ամսին էր, երբ Իրանն ընդունեց մանուկների իրաւունքի պաշտպանութեան համաշխարհային կոնւենցիան: Դրա գործադրման հիմնական պայմաններից մէկը, հասարակութեան բոլոր անդամների, յատկապէս մանուկների եւ նրանց խնդիրների հետ գործ ունեցող պաշտօնատարների, ծնողների, մանուկների խնամակալների եւ իհարկէ, հէնց իրենց երեխաների կողմից այդ

պայմանագրին ծանօթանալն է: Մանուկների իրաւունքի միջազգային կոնւենցիայի 3-րդ յօդւածի համաձայն, մանուկի գերագոյն շահերը պէտք է ուշադրութեան արժանանան պատասխանատուների եւ ծնողների կողմից: Ըստ այս յօդւածի, կառավարութիւնները եւս պարտաւորւած են անհրաժեշտ հովանաւորութիւն եւ խնամք ցուցաբերել երեխաների եւ զաւակների հանդէպ ծնողների թերաց-

ման հարցերին:

Այդ պայմանագրի 19-րդ յօդւածի համաձայն, անդամ երկրները, ֆիզիկական ու հոգեկան բրտութիւնների, որեւէ հալածանքի, անուշադրութեան եւ անփութութեան հանդէպ պէտք է օրինական, հասարակական ու կրթական անհրաժեշտ քայլեր վերցնեն: Այս պայմանագրին ստորագրող կառավարութիւնները, յանձնառու են լինում մանուկներին պաշտպանել

ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՊՏԱԿԻՑ ՄԻՆՉԵՒ ԽՈՇՏԱՆԳՈՒՄ



թնրեցուցիչ եւ ոգեշնչող դեղերի անօրինական գործածութեան ու դրանց մաքսանենգման նկատմամբ: Միւս կողմից, այս պայմանագրի 37-րդ յօդուածը յստակօրէն ընդգծում է, որ «Ոչ մի մանուկ չպիտի խոշտանգման, նենգամիտ արարքների եւ անօրինական ազատազրկման ենթարկւի, եւ մահապատիժն ու ցմահ բանտարկութիւնն արգելւում են անչափահաս՝ 18 տարին չբոլորած մանուկների եւ պատանիների հանդէպ:

Թէեւ Իրանը մօտ երկու տասնամեակ առաջ է միացել համաշ-

խարհային այս համաձայնագրին, սակայն, դժբախտաբար, ամեն օր ականատես ենք լինում մանուկների պարտադիր աշխատանքի, նրանց հանդէպ հալածանքի, սեռային չարաշահումների ու ներքին անդամների մաքսանենգման եւ այլ երեւոյթների յարաճուն դէպքերին:

«Իւնիսէֆ»-ի հաղորդած զեկոյցի համաձայն, ներկայումս, աշխարհում 275 միլիոն մանուկներ ենթակայ են հալածանքների: Ամերիկայի բժշկական միութեան կողմից հրատարակւած վիճակագրութեան համաձայն եւս,

տարեկան 150,000 մանուկներ այդ երկրում մահանում են սեռային ոտնձգութեան պատճառով եւ սա այն պայմաններում, որ ամեն տարի մօտ 140,000 վիրահատութիւն է գրանցւում մանուկների նկատմամբ սեռային բռնութիւնների հետեւանքով, եւ ընդհանուր առմամբ, տարեկան 1,7 միլիոն մանուկների սեռային ոտնձգութեան դէպքեր են զեկուցւում ամբողջ Ամերիկայում:

Իրանում, ներկայումս աւելի քան 9 միլիոն 6 տարեկանից վար եւ 27 միլիոն՝ մինչեւ 18 տարեկան մանուկներ կան: Պաշտօնական

վիճակագրության թերի լինելու պատճառով չի կարելի ստոյգ յայտարարել, թէ նրանցից քանիսն են հալածանքների ենթարկուում:

«Իսնա» գործակալության զեկոյցի համաձայն, Իրանում մանուկների հալածանքների մասին, «Բեհզիսթի» (բարեկեցութիւն) կազմակերպության կողմից հրատարակած վերջին վիճակագրութիւնը պատկանում է անցեալ տարւայ առաջին 6 ամիսներին, որի համաձայն, այդ ժամանակամիջոցում 144,565 դէպքի առնչութեամբ կապ է հաստատուել շտապ օգնութեան կենտրոնի հետ, որոնք ամբողջապէս վերաբերում էին մանուկների դէմ հալածանքներին:

Իրանի վիճակագրական կենտրոնի հաղորդման համաձայն, երկրում աւելի քան 2,550,000 աշխատող ու փողոցային մանուկներ կան, որոնք լրջօրէն ենթակայ են ֆիզիկական ու սեռային բռնութիւնների, 22,000 հոգի, որպէս անխնամ ու անպաշտպան մանուկներ, գտնուում են երկրի «Բեհզիսթի» կազմակերպութեան հովանաւորութեան ներքոյ:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ 44 ՏՈՒԿՈՍԸ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՊԱՏԻԺ ԵՆ ՄՏԱՆՈՒՄ

Ամէն դէպքում, հասարակական այս խոցելի խնդրի մասին տեղեկութիւնների քողարկմամբ հանդերձ, քննարկումները ցոյց են տալիս, որ բռնութիւնների 70 տոկոսը կատարուում է մասնաւոր եւ ընտանեկան մթնոլորտում: Այլ դիտարկումների եւ սոցիարցումների տւեալների համաձայն, Իրանցի ծնողների աւելի քան 50 տոկոսը մանուկների ֆիզիկական պատիժը համարում են իրենց «իրաւունքը»:

Մանուկների իրաւունքների պաշտպանութեան միութեան վարչութեան անդամ Սորայա



Ազիզփուրը ընդգծում է, թէ մանուկների 44 տոկոսը մարմնական պատիժներ են ստանում: Նա մանուկների իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրւայ առթիւ ասաց. «Մանուկներին հովանաւորող միութեան կողմից տրւած վիճակագրութեան համաձայն, այս տարւայ առաջին 6 ամսում մանուկների 56 տոկոսը հոգեկան ճնշումների եւ 44 տոկոսը ֆիզիկական պատիժների են ենթարկուել»:

Նա նշեց, թէ պատասխանատուների մեծագոյն թերացումն այն է, որ չգիտեն մանուկները

մինչեւ 18 տարեկան հասակը, ինչպիսի հմտութիւններ պէտք է ձեռք բերեն, որպէսզի կարողանան հասարակութեան մէջ ապրել: Անփութութիւնն ու անհոգութիւնն է այդպիսի մեծ թւերի պատճառը: Նա մատնանշելով մանուկների իրաւունքների համաձայնագիրը, ասում է. - Իրանը, 1993 թւականից սկսած, յատուկ պայմանով է ընդունել այն, եւ համաշխարհային կոնւենցիային միանալու սկզբունքը բաւականին մեծ քայլ է համարուում, սակայն դրա կողքին, դժբախտաբար, մանուկների վերաբերեալ հաստատուած օրէնքներ


ՄԵՉ ԷԼ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Այս էջերում նկարագրված մանուկների դեմ բռնության ծայրայեղ դեպքերը, դրանց սարսափելի անխղճությունն ու վայրագությունը, երբեմն հանգեցնում են այն բանին, որ մեր համայնքում ապրող ծնողը, հանգիստ շունչ է քաշում եւ մտածում, որ մանուկների դեմ բռնության մասին այս բոլոր խօսքերն ու զրոյցները, իրեն չեն վերաբերում: Սակայն բոլորովին էլ այդպես չէ:

Նախ կարելի հարցնել, որ արդե՞ք մեր մեջ չկան հենց նոյն մակարդակի վայրենի վերաբերմունք երեխաների նկատմամբ: Գիտենք, որ այդպիսի ծայրայեղ բռնություններ յաճախ պատահում են այն ժամանակ, երբ մարդիկ գտնուում են անբնական վիճակներում, հաւանաբար ակնհույզ եւ թմրադեղերի ազդեցության ներքոյ: Նկատի առնելով, որ մեր համայնքում անսովոր երեւոյթներ չեն ոչ ակնհույզ եւ ոչ էլ թմրադեղերը, տրամաբանօրէն յետեւութիւն կարելի է անել, որ հաւանական է մարդիկ այդ պայմաններում իրենց երեխաների նկատմամբ անողոք վերաբերմունք ցուցաբերեն, սակայն այդ խնդիրը մնայ ընտանիքի սահմաններում ու դրա մասին, բացի մօտիկ բարեկամներն ու հարեւանները, ուրիշները բան չհմանան: Նոյնիսկ եթէ դրանց մասին տեղեկացնեն մեր ազգային մարմիններին, ասենք դատական խորհրդին, այդ մարմինները, վարկաբեկիչ համարելով հանրային լրատութիւնը, դրանց մասին երբէք չեն զեկուցի ժողովրդին կամ մամուլին: Սա առաջինը:

Երկրորդ. հայրիկի, այսպէս կոչւած մեղմ, դաստիարակչական աստակն ու աքացին կամ մայրիկի բամփն ու ճմիթը, դրանք բռնության առաջին հանգրուաններն են եւ եթէ լուրջ չընկալւեն եւ չվերահսկւեն, կարող են սաստկանալ եւ վտանգաւոր չափերի հասնել: Իսկ ո՞վ չգիտի, որ նման վերաբերմունք ինչքան տարածւած է սովորական է մեր մէջ: Ի հարկէ, երեխային դաստիարակչական նպատակով պատժելը եւ նրան մարմնական տանջանքների ենթարկելը, երկու տարբեր մակարդակների հարցեր են, եւ դրանք երբեւէ չպիտի նոյնացնել: Սակայն նաեւ չպիտի մոռացութեան տալ դրանց միջեւ ներքին կապը եւ այն, որ առաջինը կարող է երկրորդի վերածնել:

Ռ.Ս.



րի ոլորտում դեռեւս կան աչքառու բացթողումներ եւ դա այն դեպքում է, երբ այս օրէնքի գործադրման եղանակի շուրջ հարցի արծարծումը մեծ կարեւորութիւն է ներկայացնում եւ շատ պարտականութիւններ է դնում կառավարութեան ուսին:

Մանուկների իրաւունքների պաշտպանը տեղեկացրեց նաեւ «Մանուկի իրաւունքների ազգային գրասենեակ»-ի գոյութեան մասին, որը գործում է Արդարադատութեան նախարարութեան վերահսկողութեան տակ: «Նախարարական կազմի 2009 թի 30-նւարի սկզբին կայացած նիստում, Իրանի կառավարութիւնը, 1993 թիւն, միջազգային կազմակերպութիւններին անդամակցելու վերաբերեալ օրինական միաւոր յօււածի 5-րդ ենթակէտը վկայակոչելով, Արդարադատութեան նախարարութեանը նշանակեց, որպէս «Մանուկի իրաւունքների կոմիտեի»-ի վերահսկիչ, եւ որոշւած է, որ այդ գրասենեակը պատկան մարմինների հետ համագործակցի մանուկների իրաւունքների խնդրով եւ քայլեր ձեռնարկի այդ մասին առաւել տեղեկութիւններ ձեռք բերելու համար:


Մանուկների իրաւունքների պաշտպան Ազիզփուրը համաձայնագրի 42-րդ յօււածը վկայակոչելով, մանուկի իրաւունքների եւ այս կապակցութեամբ պետական մարմին կեանքի կոչելու առնչութեամբ ասաց .- հարց է ծագում, թէ ինչու լուրջ վերբերմունք չի ցուցաբերել մեծահասակներին ու երեխաներին մանուկներին իրաւունքների ուսուցման հարցի նկատմամբ եւ ոչ մի զարգացման ծրագիր չկայ այդ իրաւունքների պաշտպանութեան ուղղութեամբ:

Իրանի աշխատող մանուկներին օժանդակող ցանցի համադրող կոմիտէի անդամ Ֆաթեմէ Ղասեմզադէն «Իլնա» գործակա-

ԵՐԵՒԱՆ ԵՒ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹԻՒՆԸ

լուծեան հետ մի ասուլիսի ընթացքում, մանուկների համաշխարհային օրւան եւ այդ օրւայ առիթով մանուկի իրաւունքների համաձայնագրին անդրադառնալու անհրաժեշտութիւնը մատնանշելով, ընդգծեց, թէ այս օրերի յիշատակումը այն տեսակետից է կարեւորում, որ վաւերական ու թափանցիկ տեղեկութիւններ հաղորդեն ուսումնագուրկ, գործող եւ հալածանքի ենթարկող մանուկների իրավիճակի մասին, քանի որ այս վերաբերեալ ստոյգ տւեալներ եւ իրավիճակի զեկուցումը ժողովրդի եւ հանրային կարծիքի համար մեծ նշանակութիւն ունեն: Նա անդրադարձաւ այն խնդրին, որ այս տարի 280,000 մանուկներ թէւ օրինական եւ անձնագրային դժարութիւններ չունէին, բայց եւ չկարողացան մուտք գործել դպրոցներ: Կառավարութեան կողմից մանուկների համար տօնախմբութիւն կազմակերպելն ի՞նչ իմաստ ունի, եթէ ըստ մանուկների իրաւունքների պաշտպանութեան կոմիտեի յօդուածների, որեւէ ուշադրութիւն չի դարձում նրանց կրթական խնդիրներին եւ դրանց որակի բարձրացմանը: Նա ակտիւացրեց, թէ կառավարութեան կողմից թափանցիկ մի զեկոյց ներկայացնելը անհրաժեշտութիւն է եւ այն մեծապէս կը նպաստի ժողովրդական հովանաւորութիւն ձեռք բերելուն եւ մանուկի իրաւունքների պաշտպանութեան կոմիտեի դրոյթներին ծանօթանալու նկատմամբ ուշադրութիւն ցուցաբերելուն:

Իրանական մամուլ
կազմեց՝ Ժիրայր Խոսրովեանը



Երեխաների նկատմամբ կատարւած սեռական բռնութեան մոտ 80.000 դէպք է գրանցուած ամէն տարի, սակայն չգրանցուած դէպքերի թիւը շատ ակտիւ մեծ է, քանի որ երեխաները վախենում են պատմել կատարւածի մասին, իսկ նման դէպքի գնահատման օրէնքով հաստատուած կարգը շատ բարդ է: Այնուամենայնիւ,

այսպիսի դէպքերը պէտք է բացայայտեն, բռնութեանը վերջ տրուի, իսկ երեխան պէտք է ստանայ մասնագիտական օգնութիւն: Սեռական բռնութեան առաջացրած էմոցիոնալ եւ հոգեբանական վնասը կարող է կործանիչ լինել երեխայի համար:

Սեռական բռնութիւնը կարող է կատարել ընտանիքի մէջ՝ ծնո-

ղի, խորթ ծնողի կամ այլ ազգականի կողմից, կամ էլ տնից դուրս՝ ընկերոջ, հարեւանի, խնամող անձի, ուսուցչի կամ անծանօթի կողմից: Սեռական բռնութեան դէպքից յետոյ, երեխան կարող է ցաւագին մտքեր եւ զգացմունքներ ունենալ, եւ նրա վարքը կարող է փոխել:

Ոչ մի երեխայ հոգեբանօրէն պատրաստ չէ կրկնող սեռական գրգռման: Նոյնիսկ երկու-երեք տարեկան երեխաները, որոնք չեն կարող իմանալ, թէ ինչ է սեռական ակտիւութիւնը, վաղ թէ ուշ խընդիրներ են ունենում, քանի որ չեն կարողանում յաղթահարել եւ յարմարել սեռական գրգռմանը:

Յինգ եւ աւելի տարեկան երեխան, որը ճանաչում է կամ սիրում է բռնութիւնը կատարողին, կարող է անելանելի վիճակում յայտնել, քանի որ, մի կողմից սիրում է այդ մարդուն, իսկ միւս կողմից գիտակցում է, որ այդ սեռական յարաբերութիւնները սարսափելի «սխալ» են: Եթէ երեխան փորձում է վերջ դնել այդ յարաբերութիւններին, բռնութիւն կատարող անձը կարող է սպառնալ, որ այս կամ այն կերպ կը վնասի նրան կամ աւելս չի սիրի:

Եթէ սեռական բռնութիւնը տեղի է ունենում ընտանիքում, երեխան կարող է վախենալ, որ ընտանիքի միւս անդամները կը բարկանան կամ կամաչեն, կամ էլ որ ընտանիքը կը քայքայի, հէնց որ գաղտնիքը բացայայտուի:

Երկարատեւ սեռական բռնութեան զոհ դարձած երեխան ցածր ինքնագնահատական ունի, համարում է, որ ինքը ոչ մի բանի պէտք չէ եւ ոչ նորմալ կամ աղճատած պատկերացում ունի սեռական յարաբերութիւնների մասին: Երեխան կարող է ինքնամփոփ դառնալ, չվստահել մեծահասակներին և ինքնասպանութեան մտքեր ունենալ:

Որոշ երեխաներ, որոնք սեռական բռնութեան են ենթարկուել,

դժուարութեամբ են յարաբերութիւններ հաստատում այլ մարդկանց հետ, ոմանք էլ չափահաս դառնալով՝ իրենք են սկսում բռնութիւն գործել երեխաների

նկատմամբ, դառնում են մարմնավաճառ կամ էլ այլ լուրջ խնդիրներ են ունենում:

Յաճախ սեռական բռնութեան բացայայտ նշանները բացակա-

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԴԵՍ ԲՈՆՈՒԹԻՒՆԸ՝ Թ Է Ր Ո Վ

1. 2008 թւականին. իւրաքանչիւր 601 երեխայից մէկը մարմնալին բռնութեան զոհ է եղել. դէպքերից 80 տոկոսում, բռնութիւն գործադրողները եղել են երեխայի ծնողները:

2. Իւրաքանչիւր 100 հազար երեխայից 2.34-ը մահանում են իրենց դէմ բռնութեանն առնչուող վնասուածքների պատճառով. մահացած երեխաների 80 տոկոսը 4 տարեկանից աւելի փոքր երեխաներ են:

3. Գուշակուում է, որ իւրաքանչիւր երեխայի դէմ բռնութեան եւ անփութութեան իւրաքանչիւր բացայայտուած դէպքի դիմաց կան երկու չբացայայտուած դէպք:

4. Նիգլեքքը առայժմս ամենատարածուած ձեւն է: Բոլոր դէպքերի 78 տոկոսը:

5. Ամէն տարի արձանագրուած մարմնային բռնութիւնը մանուկների վերաբերեալ բռնութեան 17.8 տոկոսն է կազմում:

6. Աղջիկների մէկ չորրորդը եւ տղաների մէկ վեցերորդը նախքան 17 տարին աւարտելը, սեռային բռնութեան են ենթարկուում:

7. Իւրաքանչիւր 10 բռնաբարողներից 8-ը ընտանիքի անդամներից են կամ անձինք, որոնց երեխան ճանաչում է:

8. Ամսական առնուազն 100 նորածին է աշխարհ գալիս, որոնց մայրը թմրամոլ է:

9. Այն երեխաները, որոնց ծնողներից մէկը թմրադեղ է գործածում, 13-ից մէկը կանոնաւոր կերպով ֆիզիկապէս բռնութեան է ենթարկուում:

10. Բռնութեան ենթարկուած երեխաները աւելի մեծ հաւանականութեամբ դառնում են ալկոհոլի եւ թմրադեղերի մոլի: Նրանցից մէկ երրորդը ապագայում բռնութեան են ենթարկելու իրենց երեխաներին:

11. Բոլոր կալանաւորւածների 84 տոկոսը մանուկ հասակում բռնութեան են ենթարկուել:

յուն են: Որոշ նշաններ կարող են յայտնաբերել միայն բժշկական հետազոտութեան ժամանակ:

Սեռական բռնութեան ենթարկւած երեխաների մօտ զարգանում են յետեւեալ նշանները.

- անսովոր հետաքրքրասիրութիւն են ցուցաբերում կամ խուսափում են սեքսի վերաբերեալ ամէն ինչից

- քնի խանգարումներ կամ գիշերային մղձաւանջներ են ունենում

- ընկճւած են, ընտանիքից եւ ընկերներից մեկուսացած են

- զայթակղեալ վարք են ցուցաբերում

- պնդում են, որ իրենց մարմինը կեղտոտ է կամ վնասւած, կամ վախենում են, թէ ինչ-որ բան այն չէ սեռական օրգանների շրջանում

- հրաժարում են դպրոց գնալուց

- օրինազանց արարքներ, վարքի հետ կապւած խնդիրներ են ունենում

- գաղտնապահ են

- նկարներում, խաղերում, երեւակայութեան մէջ սեռական տարրեր են գտնում

- անսովոր ագրեսիութիւն են ցուցաբերում

- ինքնասպանութեան փորձեր են անում եւ մտքեր են ունենում

Բռնութիւն գործադրողը կարող է այնպէս վախեցնել երեխային, որ յատուկ ջանքեր կը պահանջւեն, որպէսզի երեխան պաշտպանւած զգայ իրեն եւ կարողանայ ազատօրէն կիսել: Եթէ երեխան ասում է, որ սեռական բռնութեան է ենթարկւել, ապա ծնողները պէտք է փորձեն հանգիստ մնալ եւ համոզել երեխային, որ դա իր մեղքով չի կատարւել: Նման իրավիճակում կը պահանջւեն բժշկական հետազոտութիւն կամ հոգեբոյժի օգնութիւն:

Ծնողները կարող են պակասեցնել կամ կանխել սեռական բռնութեան հնարաւորութիւնը, եթէ.

- ասեն երեխաներին, որ եթէ որեւէ մէկը փորձի ձեռք տալ քո մարմնին կամ այնպիսի բաներ

անի, որոնցից դու քեզ անյարմար կամ անսովոր կզգաս, ասա ՈՉ այդ մարդուն եւ անմիջապէս պատմիր ինձ:

- սովորեցնեն երեխաներին, որ յարգանքը մեծերի հանդէպ մոյնը չէ, ինչ կոյր ենթարկւելը. երբէք մի ասէք երեխային, որ նա պետք է միշտ անի այն, ինչ իրեն ասում է ուսուցիչը, կամ դայտակը, կամ որեւիցէ այլ մէկը:

- աջակցեն մասնագիտական կանխարգելիչ ծրագրերի ներդրմանը տեղի դպրոցական համակարգում:

Սեռական բռնութեան ենթարկւած երեխաները եւ նրանց ընտանիքները մասնագէտի օգնութեան կարիք ունեն: Մանկապատանեկան հոգեբոյժը կարող է օգնել երեխային պայքարել բռնութեան հետ կապւած մեղքի զգացումի դէմ, վերականգնել իր ինքնագնահատումը, յաղթահարել իրեն հասցւած տրաման: Այս բուժումը կը նւագեցնի յետագայ խնդիրների զարգացման հնարաւորութիւնը:



SADLY THE ONE PLACE THEY SHOULD FEEL SAFE IS THE ONE PLACE THEY FEAR MOST. HELP REPORT CHILD ABUSE. CALL 021. 31901446 OR 31901556.



Արձագանք երեխայի սեռական բռնությունը

Երբ երեխան մեծին ասում է, որ ենթարկել է սեռական բռնության, մեծը կարող է շփոթել եւ չիմանալ՝ ինչ ասել: Ներքոյիշյալ խորհուրդները կարող են օգնել պատասխանել երեխային, որն ասում է, որ ենթարկել է սեռական բռնության:

Ի՞նչ ասել

Եթե երեխան թոյլ ակնարկ է անում, որ նրա հետ սեռական բռնություն է տեղի ունեցել, փորձեք համոզել նրան ազատ խօսել: Դատապարտական դիտողություններ մի արեք:

- Ցոյց տուք, որ հասկանում եւ լուրջ էք ընդունում երեխայի ասածը: Մանկապատանեկան հոգեբույժները վստահ են, որ երեխաները, որոնց լսում եւ հասկանում են, աւելի լաւ են իրենց զգում, քան նրանք, ում չեն լսում: Սեռական բռնության փաստի մասին բաց պատմելը շատ կարեւոր է երեխայի համար՝ տրամաբան յադժարածան ու բուժման ուղղութեամբ:

- Վստահեցրեք երեխային, որ նա շատ ճիշտ է վարել՝ Ձեզ այդ մասին պատմելով: Երեխան, որը սերտ շփում ունի բռնութիւնը կատարած անձի հետ, կարող է մեղաւոր զգալ իրեն գաղտնիքը բացելու մէջ: Երեխան կարող է վախեցած լինել բռնութիւն կատարողի սպառնալիքներից՝ վնասել երեխային կամ ընտանիքի այլ անդամներին, եթէ նա բացի գաղտնիքը:

- Աւելի երեխային, որ նա բոլորովին մեղաւոր չէ դրանում: Երեխաների մեծ մասը, փորձելով հասկանալ բռնութեան փաստը, կարող են հաւատալ, թէ ինչ-որ տեղ իրենք են պատճառը եւ անգամ կարծել, թէ դա իրենց պատիժն է՝ մտքում պատկերացրած կամ արած վատ արարքների հա-

մար:

- Եւ վերջապէս, առաջարկեք երեխային պաշտպանութիւն եւ խոստացեք, որ շտապ քայլեր կը ձեռնարկեք, որպէսզի վերջ տրուի իր հանդէպ սեռական բռնութեանը:

Ի՞նչ անել

Յայտնէք համապատասխան մարմիններին երեխայի հանդէպ կատարած սեռական բռնութեան որեւէ կասկածի մասին: Եթէ բռնութիւնը կատարել է ընտանիքի ներսում, յայտնէք այդ մասին երեխաների պաշտպանութեան տեղական մարմիններին: Եթէ բռնութիւնը ընտանիքից դուրս է, յայտնէք այդ մասին ոստիկանութիւն կամ տեղական իրաւաբանական գրասենեակ: Անկեղծօրէն այդ մասին յայտնելու դէպքում, յայտնող անձը պաշտպանւած է պատժից: Համապատասխան գործակալութիւնը կանցկացնի զննատում եւ կը պաշտպանի երեխային:

Ծնողները պէտք է խորհրդակցեն իրենց մանկաբույժի կամ ընտանեկան բժշկի հետ, որոնք կուղարկեն երեխային սեռական բռնութեան ոլորտում մասնագիտացած բժշկի մօտ: Քննող բժիշկը կը կր գնահատի երեխայի վիճակը եւ կը բուժի բռնութիւնից առաջացած ֆիզիկական բարդութիւնները, փաստեր կը հաւաքի երեխային պաշտպանելու համար եւ կը վստահեցնի երեխային, որ ամէն ինչ կարգին է:

Սովորաբար երեխային պէտք է նաեւ ստուգել հոգեբանական առումով՝ պարզելու համար սեռական բռնութեան ազդեցութիւնը նրա վրայ եւ որոշել, արդեօ՞ք անհրաժեշտ է տեւական մասնագիտական օգնութիւն, երեխային տրամաբան վիճակից հանելու համար: Մանկապատանեկան հոգեբույժը կարող է օգնութիւն ապահովել նաեւ ընտանիքի համար, որոնց վրայ նոյնպէս ազդել է երեխայի հանդէպ սեռական բռն-

ութեան փաստը:

Թէեւ երեխայի բոլոր յայտարարութիւնները կարող են ճիշտ եւ անկեղծ լինել, որոշ խնդիրներ կարող են ծագել իրաւապահ մարմինների հետազոտութիւններում եւ այլ իրավիճակներում: Երբեմն դատարանը խնդրում է մանկապատանեկան հոգեբույժին օգնել որոշելու, արդեօ՞ք երեխան ճիշտ է խօսում, կամ կը վնասի արդեօ՞ք երեխային, եթէ նա իր հանդէպ կատարւած սեռական բռնութեան մասին խօսի դատարանում:

Երբ երեխան ստիպւած է դատարանում վկայութիւն տալ, կան յատուկ միջոցներ, որոնք կը թեթեւացնեն ճնշումը նրա վրայ, օրինակ՝ տեսաժապաւեցի վրայ նկարահանումը, յաճախակի ընդմիջումները, հանդիսատեսի բացակայութիւնը, եւ մեղադրեալի վրայ չնայելը:

Մեծահասակները, իրենց հատուկութեան եւ խելացիութեան պատճառով միշտ առաջինն են մեղադրում սեռական բռնութեան փաստի արձանագրութեան ժամանակ: Երբէք պէտք չէ մեղադրել երեխային:

Երբ երեխան պատմում է իր հանդէպ կատարւած սեռական բռնութեան փաստի մասին, աջակցող եւ կարեկցող արձագանքը առաջին քայլն է երեխային օգնելու եւ մեծահասակների հանդէպ նրա վստահութիւնը վերականգնելու ուղղութեամբ:

Աղբիւր՝ www.doctors.am

ԱՇԽԱՐՀԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՋՔԵՐՈՎ

Արմինե Մելիք - Իսրայելեան



Ամենամեայ աւանդական տօնակատարութիւնների շարքում է 1925 -ին, ժնեւեան կոնգրեսում երեխաների պաշտպանութեան համար հրաւիրւած համաշխարհային կոնֆերանսի ընթացքում վաւերականութիւն ստացած «Երեխաների պաշտպանութեան միջազգային օրը», որը տօնուում է 1950 թւականից, իր մէջ ներառելով մատաղ սերնդի հանդէպ դրսեւորող ուշադրութեան ու պաշտպանութեան յատուկ վերաբերմութի կատարելագործման խնդիրներին ուղղւած հոգածութիւն եւ առաջնահերթ վերաբերմունքի դրսեւորումներ, որոնք առաւել տօնական տեսք ու շուք են ստանում վերջերս Երեւանում կազմակերպւած զանազան միջոցառումների, հրապարակային տօնակատարութիւնների, մանկական համերգների ու ցուցահանդէսների շնորհիւ:

Յունիսի մէկին, նման առիթ էր ընծեմնւել երեխաներին նաեւ Երեւանի Յովհաննէս Շարամբեանի անւան Ժողովրդական ստեղծագործութեան կենտրոնի կողմից, ՀՀ հանրակրթական դպրոց-

ների երեխաներին, «ԱՇԽԱՐՀԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՋՔԵՐՈՎ» նկարչական տասնօրեայ ցուցահանդէսի կազմակերպման շնորհիւ, ուր իրենց ստեղծագործութիւններով ներկայացել էին Երեւանի Եղիշէ Չարենցի անւան, Մուշեղ Իշխանի անւան եւ Վանաձորի թիւ 121 դպրոցների սաները:

Երեխաների աջքերով պատկերւած իւրաքանչիւր ստեղծագործութեան մէջ խօսում էին հայրենիքը, աշխարհը, իրենց շրջապատող միջավայրը խաղաղութեան մէջ տեսնելու գունեղ ցանկութիւնները, որոնք իրենց պարզ ու մաքուր արտայայտչածեւերի մէջ նոյնքան իմաստալից էին:

Ներկայացւած աշխատանքներում գերակշռում էր հայրենի խորհրդանիշներով արտայայտւելու մօտեցումը, որը գալիս է փաստելու, որ 5 - ից 13- տարեկան երեխաների մէջ արդեն ձեւաւորւած է հայրենիքի ու նրա հանդէպ սիրոյ, պաշտամունքի գաղափարը, նրանց իմացութիւնը իրենց պատմութեան մասին... Այս շարքին էին պատկանում Մ. Իշխանի անւան դպրոցի սանուհի 9 ամեայ

Դիաննա Ասատրեանի, 11 ամեայ Գոռ Պապիկեանի, Վանաձորի թիւ 121 դպրոցի աշակերտուհի 7 ամեայ Ռուզան Սարուխանեանի, Չարենցի անւան դպրոցի աշակերտուհի 13 ամեայ Մարիա Արամեանի աշխատանքները, որոնք խօսում էին երեխաների մէջ ձեւաւորող անհատական վերաբերմունքի մասին հանդէպ իրենց շրջապատող իրականութիւնն ու նրանից ներս ու դուրս տեղի ունեցող իրադարձութիւնները՝ ինֆորմացիոն հեղեղի մէջ: Խաղաղութեան, բարութեան ու սիրոյ գաղափարը իշխում էր ոչ միայն Հայաստանը խորհրդանշող նկարներում, այլեւ նատիւրմորտներում, բնանկարներում, ուր երեխաները իրենց գունամտածողութեամբ ստեղծել էին հայկական, ազգային երանգապնակին հարազատ գունապատկերներ, ուր վառ արտայայտւած էր իր ինքնութիւնը գիտակցող մանուկի ազգային պատկանելութեան ենթագիտակցումը:

- Նկարում ենք այն ինչ զգում ենք, երբէք նախապէս չենք պլաւաւորում գոյնի ու պատկերի



ընտրությունը, - անկեղծօրէն խոստովանում էին երեխաները, որոնց համար նման ցուցադրութիւնները կարելուում են նաեւ նրանով, որ նպաստում է ազատ արտայայտման, իրենց ընկալումներով ու պատկերացումներով աւագների հետ կիսւելու անմիջականութեան ձեւաւորմանը, ինքնարտայայտման վախի եւ նման այլ աւելորդ կոմպլեքսներից ձերբազատմանը:

Մանկական ցուցահանդէսին համերգային կատարումներով իրենց մասնակցութիւնն էին բերել նաեւ Թալինի երաժշտական դրպրոցի սաներն ու սանուհիները:

Երեխաների համար բաւակահին կարելուելով նման միջոցառումների յաճախականութիւնը, ցուցահանդէսի կազմակերպիչները ներկայացւած աշխատանքների փոքրիկ հեղինակների մասին

իրենց հիացմունքն արտայայտելով, շեշտը դրեցին դպրոցներում երեխաների գեղագիտական դաստիարակութեան կարելուութեան եւ անհրաժեշտութեան վրայ:

- Մշակոյթի պատմութեան առարկայի բացակայութեան պայմաններում, որը միմիայն անցնում են յատուկ, մասնաւոր դպրոցներում, այսօր կան հանրակրթարաններ, ուր նկարչութիւն առարկան որպէս այդպիսին ուղղակի չի դասաւանդուում եւ երեխան, որը մինչեւ 6 - րդ դասարան անցնում է կերպարուեստ առարկան՝ մինչեւ դպրոցն աւարտելը չի շփուում արուեստի ու մշակոյթի շատ բաղկացուցիչների հետ:

Յաճախ այդ երեխաները ընտրում են արուեստի ու մշակոյթի բնագաւառը, իրենց յետագայ ուսումը շարունակելով այնպիսի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, որոնք նոր սերունդ են ճանապարհելու դէպի մշակոյթ եւ արուեստ, ուստի, կարելուոր է թէ ինչքանով է հիմքը ամուր դրուում, իսկ հիմքը դպրոցն է:



ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԹԵՆՈՒԹՈՒՔ

Էժանագին նոթբուք գնել, թե էժանագին սովորական համակարգիչ: Այս հարցը կարող է անվերջ մտահոգել մինչև ձեր վերջնական որոշում կայացնելը: Այս յօրածն առաջարկում է քննարկել նոթբուք ունենալու բոլոր առաւելութիւններն ու թերութիւնները:

1. Մշակման արագութիւն

Մշակման արագութեամբ նոթբուքները միշտ էլ զիջում են սեղանի իրենց հակառակորդներին: Բայց միկրոչիպերի արտադրութեան տեխնոլոգիաներն արագ են զարգանում, եւ այդ տարբերութիւնն աստիճանաբար կը կրճատւի:

2. Լարերի բացակայութիւն

